ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 591
05 հոկտեմբեր 2018թ.

Հարգելի պարոն Պետրոսյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները 2018թ-ի հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատ.՝ Ա. Պետրոսյան
Հեռ.022263539

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 232-Ա

2018ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի բյուջեի սելաֆատարի 5113 հոդվածի /բաժին 4 խումբ 2 դաս 1/ նախատեսված գումարից 735,0 /յոթ հարյուր երեսունհինգ հազար/ դրամ տեղափոխել մշակույթի 5122 հոդված / բաժին 8 խումբ 2 դաս 3/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ հոկտեմբերի 1

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 233-Ա

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 22-28-րդ կետերի, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N 42-Ն որոշման հավելված N 2-ի, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2018թվականի սեպտեմբերի 29-ի N 10/1 արձանագրությունը, որոշում եմ՝

1. Բալահովիտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող /հիմք 2018թվականի մայիսի 21-ի N 21052018-07-0089 վկայականի/ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 6/8 հասցեում գտնվող 0,1792հա մակերեսով հողամասն օտարել Վլադիմիր Գզողյանին:
2. Վլադիմիր Գզողյանը պարտավոր է

1/Համայնքապետարանի 900105206172 հաշվեհամարին վճարել 2634240դրամ, հողամասի օտարման գին:

2/Համայնքապետարանի հաշվեհամարին 900105206065 վճարել 65000/վաթսունհինգ հազար/ դրամ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի նախապատրաստման և կազմման մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար:

3. Լիազորել աշխատակազմի քարտուղար՝ Անդրանիկ Պետրոսյանին 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գումարների վճարումից հետո գնորդի հետ կնքելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:
4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է գնորդի՝ Վլադիմիր Գզողյանի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ հոկտեմբերի 5
գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 234-Ա

<<ՕՋԱԽ>> ՍՊԸ_ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N 42-Ն որոշման, հիմք ընդունելով <<Օջախ>> ՍՊԸ-ի 2018թվականի հոկտեմբերի 4-ի հայտը՝ որոշում եմ

1. <<Օջախ>> ՍՊԸ-ին տալ 2018թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գ.Բալահովիտ 9-րդ փողոց թիվ 2 հասցեում գտնվող /500ք.մ և ավելի/ մակերեսով ռեստորանային համալիրում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ հոկտեմբերի 5

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 235-Ա

<<ՕՋԱԽ>> ՍՊԸ_ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 42-Ն որոշման, հիմք ընդունելով <<Օջախ>> ՍՊԸ-ի 2018թվականի հոկտեմբերի 4-ի դիմումը՝ որոշում եմ

1. <<Օջախ>> ՍՊԸ-ին գ.Բալահովիտ 9-րդ փողոց թիվ 2 հասցեի հիմնական շինության ներսում /500ք.մ-ից ավելի/ տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2018թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018թվականի դեկտեմբերի 31-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ հոկտեմբերի 5

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 236-Ա

<<ՕՋԱԽ>>ՍՊԸ_ԻՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ

ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 42-Ն որոշման և հաշվի առնելով <<Օջախ>> ՍՊԸ-ի 2018թվականի հոկտեմբերի 4-ի դիմումը՝ որոշում եմ

1. Թույլատրել <<Օջախ>> ՍՊԸ-ին տեղադրել այլ արտաքին գովազդ, /20քմ/ 2018թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018թվականի դեկտեմբերի 31-ը գ. Բալահովիտ 9-րդ փողոց թիվ 2 հասցեում:
2. Հաստատել այլ արտաքին գովազդի էսքիզը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ հոկտեմբերի 5

գ.Բալահովիտ

Հավելված
Բալահովիտ համայնքի
ղեկավարի 2018թվականի
հոկտեմբերի 5-ի թիվ 236-Ա որոշման

ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶ

4ք.մ

Օջախ

5ք.մ

Համայնքի ղեկավար Կ.Գրիգորյան